մենատնտեսություններ, վորոնք ունեն 55 և ավելի տարեք, յերեկաները մինչև 16 տարեկան.

բ) հաշմանդամները, վորոնք չեն կարող մասնակցել դաշտային և այլ աշխատանքներին.

գ) պատերազմի և ոչխատանքի այն հաշմանդամները, վորոնք սոցիալական ապահովագրության մարմնների կողմից դասված են հաշմանդամության 1-ին և 2-րդ խմբակներին:

Այն տնտեսությունները, վորոնք ունեն 3 և ավելի աշխատունակներ, որենքի 66-րդ ՀԱԴՎԱԾՈՎ նախատեսված գեղչը չեն սուսնում, անկախ անաշխատունակների թվից: Աշխատունակների թիվը հաշվելիս այն անձիք, վորոնք դամբում են կարմիր բանակում կամ կարմիր նավատորմում, և ուսումնական հիմնարկների ուսանողները, վորտեղ ուսուցման ժամկետը 1 տարուց ավելի յէ, հաշվի չեն առնվում:

ՈՐԵՆՔԻ 67-ՐԴ ՀՈԴ.— Այն տնտեսությունները, վորոնք չարամտուն չեն կատարում ցանքի պլանը և պետությանը պարտադիր կարգով գյուղատնտեսական մթերքները նահանջելու պարտավորությունները, գյուղատնտեսական հարկով հարկվուն են ընդհանուր հիմունքներով, սակայն նրանց հարկի գումարը կրկնապատկում է: Այդ տնտեսությունները գյուղատնտեսական հարկի վոչ մի արտօնությունից (նույն թվում և 66-րդ հոդվածով նախատեսված զեղչերից) չեն ոգտվում: Այդ տնտեսությունները ցուցակները հաստատում են շրջանային գործադիր կամրիտները:

Դ. ԱՐՏՈՆՈՒՅՑՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՎՈՐ ՄԵՆԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

ԱՐՏՈՆՈՒՅՑՈՒՆՆԵՐ ՍԱԿԱՎԱՉՈՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

ՈՐԵՆՔԻ 68-ՐԴ ՀՈԴ.— Զառամյալ հասակի (վարչուն տարեկան և ավելի) հետեւանդով աշխատունակ և ընտանիքում աշխատունակ անդամներ չունեցող մենատնտեսների տնտեսությունները լրիվ ազատվում են հարկից:

Այն աշխատավոր մենատնտես տնտեսությունները, վորոնք չունեն ընտանիքում աշխատունակ անդամներ և յերեկ տնտեսության մեջ չկա խոշոր անառուն, սակավագրության պատճուղ հարկից կարող են լրիվ կամ մասնակի ազատվել շրջանային

գործադիր կոմիտեյի կողմից այն ցուցակներով, վոր ներկայացնում և շրջանային ֆինանսական բաժինը:

Հրահանգի § 42.— Զառամյալ մենատնտեսների տնտեսությունները գյուղհարկի վճարումից ազատության շրջանական բաժինի վորոշումների կոմիտեների վորոշումների հիման վրա:

Գյուղատնտեսական հարկից ազատելու մասին զառամյալների տնտեսություններից հատուկ գիմումներ պահանջելը արգելվում է:

Հրահանգի § 43.— Գյուղհարկի վճարումից ազատվում են մենատնտեսների այն տնտեսությունները, վորոնք անաշխատունակ են զառամյության պատճառով և առկա չունեն տվյալ տնտեսության մեջ դրադված՝ ընտանիքի աշխատունակ ուրիշ անդամները:

Գյուղատնտեսական հարկի վճարումից ազատվում են զառամյալ տղամարդկանց և կանանց նաև այն մենատնտես տնտեսությունները, վորոնց վորդին գտնվում է իսկական զինվորական ծառայության մեջ կարմիր բանակի կամ կարմիր նավատորմի շարքերում, իսկ ընտանիքում մնացել են նրա կինը, մինչև 7 տարեկան յերեխաներով:

ԱՐՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ ՑԵՎ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ

ՈՐԵՆՔԻ 69-ՐԴ ՀՈԴ.— Այն բանվորները և ծառայողները, վորոնք ունեն սժանդական գյուղական տնտեսությունում չեն գտնվում, նրանց վրա 33 հոդվածը տարածվում է, յերե նրանց սժանդական գյուղական տնտեսությունը չի գերազանցում այն չափերը, վորոնք բույլատրվում են գյուղատնտեսական արտելի կանոնադրությամբ տվյալ շրջանի կողմանությունների համար:

Բանվորների և ծառայողների այն տնտեսությունները, վորոնք իրավին համապատասխանում են այս հոդվածի պայմաններին, բայց վորոնցում հիմնական աշխատողը գտնվում է մշտական վարձու աշխատանքում մի տարուց պակաս, յենքարկվում են գյուղատնտեսական հարկի այն դրույթներով, վորոնք սահմանված են կոլտնտեսականների տնտեսությունների համար:

Այն բանվոր ծառայողները, վորոնք չեն յենքարկվում գյուղատնտեսական հարկի այս հոդվածի հիման վրա, հարկվում են շենքների հարկով և հոդվածին ունետայով ընդհանուր հիմունքներով:

Հրահանգի § 44.— Գյուղհարկի որոնքի 69-րդ հոդվածով սահմանված արտոնությունը տրված եւ անկախ նրանից, թե վորոնեղ և գտնվում բանվորի և ծառայողի սժանդական տնտեսությունը, ընտանիքի հիմնական աշխատողի մշտական բնակավայրում, թե այնտեղ, վորոնեղ մշտավես ապրում են նրա ընտանիքի անդամները:

Այն բանվորները և ծառայողները վորոնք ունեն խոտհարքներ և ողտագործում են իրենց անասունների կերակրման համար, նման արտոնությունից չեն զրկվում:

Հրահանգի § 45.— Որոնքի 69-րդ հոդվածով բանվորների և ծառայողների տնտեսությունները գյուղատնտեսական (հարկի վճարումից ազատելու համար յենթաշրջանային հարկային տեսառչը նրանցից կարող և տեղեկանքներ սկսհանջել աշխատանքի տեղից):

Հրահանգի § 46.— Գյուղական այն ուսուցիչների տնտեսությունները, վորոնք ԽՍՀՄ ԺԿԸ 1934 թ. ապրիլի 20-ի վորոշմամբ ստացել են հողամասեր, ազատվում են գյուղհարկի վճարումից, յեթե նրանք համապատասխանում են որոնքի 69-րդ հոդվածի մնացած պահանջներին:

Հրահանգի § 47.— Բանվորների և ծառայողների համար որենքի 69-րդ հոդվածով սահմանված արտոնությունը տարածվում է կենսաթոշակառուների տնտեսությունների վրա, ինչպես և այն անձանց տնտեսությունների վրա, վորոնք գտնվում են ծառայության մեջ կարմիր բանակում կամ կարմիր նավատորմում (կարմիր-բանակայինների, հրամանատարների) այն պայմանով յեթե նրանց գյուղական տնտեսությունը չի գերազանցում գյուղատնտեսական արտելի կանոնադրությունը տվյալ շրջանի կոլտնտեսականների համար թույլատրվող չափերը և յեթե նրանց տնտեսության բոլոր աշխատունակ անդամները բացի ուսանողներից և տնային տնտեսություն վարող անձից աշխատում են վարձով:

Ծանուցագիրը հանձնելուց հետո կարմիր բանակ կանչված անձանց տնտեսությունների հարկի վճարման ժամկետները չհասած գումարները հանվում են:

Հրահանգի § 48.— Գյուղհարկով հարկվելուց լիովին ազատվում են անտառը պահպանող աշխատակիցները, վորոնք ապրում են իրենց կողմից պահպանող անտառային տեղամտություն:

Անտառը պահպանող աշխատակիցին այդ արտգնությունը տրվում է, յեթե նա ունի վոչ ավելի, քան մի կով, մի ձի, մանր անսառուն և անտառում հատկացված հողամաս, և այն պարբանով, վորոնանք գյուղում (անտառից դուրս) բնավ գյուղատնեսություն չունեն:

ՈՐԵՆՔԻ 70-ՐԴ ՀՈԴ.— Հարկից ազատվում են այն անձնեց տնտեսությունները, վորոնք մեկ տարուց վոչ պակաս ժամանակվ կոնտրակտացիա յեն կնիքի կամ իրենց ամրացրել են ածխային արդյունաբերության ստորերկրյա աշխատանք կատարելու համար:

Նրանք իրենց պարտավորությունները չկատարելու դեպքում երանց տնտեսություններից հարկը գահակում է ընդհանուր հիմուններով :

Հրահանգի § 49.— ՈՐԵՆՔԻ 70-ՐԴ ՀՈՂՎԱՃՈՎ նախատեսված արտգնությունները ստանալու համար անհրաժեշտ և յենթաշրջանային հարկային տեսչին տեղեկանք ներկայացնել աշխատանքի սեղից այն մասին, վոր հիմնական աշխատանակ աշխատողը կոնտրակտացիա յեն կնիքի կամ իրեն ամրացրել և ստորերկրյա աշխատանքին ածխային արդյունաբերությունում :

Տնտեսությունը ազատվում է գյուղհարկի միայն այն մասից, վորի վճարման ժամկետները չեն լրացել ածխարդյունաբերության մեջ ստորերկրյա աշխատանքի անցնելու պահին:

ՈՐԵՆՔԻ 71-ՐԴ ՀՈԴ.— Հարկից ազատվում են յերկարուդային, ջրային, խնուղային և գրութային տրանսպորտի գծային աշխատողների այն յեկամուտները, վորոնք ստացվում են տրանսպորտին հատկացված հողերում գտնվող գյուղատնեսական բույր տեսակի աղբյուրներից:

ՈՐԵՆՔԻ 72—81 ՀՈԴ. ՀՈԴ.— Վերացված են :

ԱՐՏՈՒՐԻԹՅՈՒՆՆԵՐ ԱՅՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՎՈՐՈՆՑ ԿԱԶՄԻ ՄԵԶ ՄՏՆՈՒՄ ԵՆ ԽՈՐՀԻՇՎՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՐՈՍՆԵՐ, ՇԲԱՆՇԱՆՆԵՐՈՎ ՊԱՐԳԵՎԱԾՐՎԱՆ ԱՆՁԻՆՔ, ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՐՈՍՆԵՐ, ԻՆՉՊԵՍ ՆԱՅԵՎ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐ

ՈՐԵՆՔԻ 82-ՐԴ ՀՈԴ.— Արտօնություններ տրվում են այն տնտեսություններին, վորոնք կազմի մեջ մտնում են՝

ա) Խորհրդային Միուրյան հերոսներ, և ԱՀ Միուրյան շխմշաններով կամ հեղափոխական պատվո գեներով պարզեցած անձնելի հերոսներ:

բ) Պատերազմի և աշխատանքի այն հաշմանդամները, վորոնք դասվել են հաշմանդամության առաջին, յերկրորդ և յերրորդ խմբակներին:

թվարկած տնտեսություններին հաշվարկված հարկից գեղչ ետրվում 20 ուրիշ, յերե տնտեսության մեջ կամ ուրիշ աշխատանակարդիկ, և 30 ուրիշ, յերե տնտեսության մեջ չկան ուրիշ աշխատանակարդիկ: Յերե տնտեսության մեջ կամ այս հողվածում թված կատեգորիաներին պատկանող մի քանի անձնելիք, արտօնությունը տրվում է յորպահանջյուր անձին:

ՈՐԵՆՔԻ 83-ՐԴ ՀՈԴ.— Այն տնտեսությունների համար, վորոնց կազմի մեջ մտնում են սահմանված ուժման և հավաքի համար կանչված պահեստի զինվորական ծառայողներ և զինապարտներ, հարկի այն մասը, վորի մուծելու ժամկետը զուգադիմում է ուստի կամ հավաքի ժամկետին, հետագակում է նրանց վերադառնալուց հետո մեկ ամիս ժամանակով:

ՈՐԵՆՔԻ 84-ՐԴ ՀՈԴ.— Վերացված են :

ԱՐՏՈՒՐԻԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՐԱԲԵՆԿՈՂՅԵՐԻՆ

ՈՐԵՆՔԻ 85-ՐԴ ՀՈԴ.— Այն մենատնես տնտեսությունները, վորոնք պլանային կարգով վերաբենկողի են մինչև 1930 թ. ապրիլի 1-ը Հեռավոր Արևելյան յերկրում, կարելիայի և ԱՀ Մուրմանսկի ոկրուգում, հարկից ազատվում են 10 տարվա ընթացում:

Այն մենատնես տնտեսությունները, վորոնք պլանային կարգով վերաբենկողի են 1930 թ. ապրիլի 1-ից հետո, արտօնությունը են ստանում հասուն վորոշումների հիման վրա:

ԱՐՏՈՒՐԻԹՅՈՒՆՆԵՐ ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԾԱՅՐԱՄԱՍՆԵՐԻ ՄԻ ՔԱՅ ՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅՐԱՎԵՐՆԵՐ

ՈՐԵՆՔԻ 86-ՐԴ ՀՈԴ.— Հարկից ազատվում են բնակչության հետևյալ խմբակները:

ա) Այն ազգությունների բաղադրյաները, վորոնք պատկանում են ԽՍՀՄ կԳԿ և ԺԿ 1928 թվի մարտի 28-ի «ԽՍՀ Միուրյան շխմշաններ»:

քյան Հյուսիսային ծայրամասերում ապրող ցեղերի հարկային արտանությունների մասին» վորոշման մեջ թված ժողովուրդներին (ԽՍՀՄ Որ. գող. 1928 թ. № 21, հոդ. 186):

բ) Կամչատկայի և Սախալինի մարզերի, Չուկոտյան և Կորյակի ազգային ոկրուգների, Ամուրի մարզի Սելմչինո-Բուրեխյան շրջանի, Ներքին Ամուրյան մարզի Այան-Մայսկի, Ոխոտսկի և Տուգուրո-Չումիկանսկի շրջանների, Զեյսկի մարզի Զելտուլակյան և Զեյսկո-Ռոչուրսկի շրջանների ինչպես և Հեռավոր Արեվելյան յերկրի Ոյլսկի, Սեվերո-Եվենսկի և Միջին-Կամսկի շրջանների ամբողջ բնակչությունը:

գ) Արևմտյան-Սիբիրյան և Կրասնոյարսկի յերկրների, Արեվելյան-Սիբիրյան մարզի, Բուրյատո-Մոնղոլական ԻԽՍՀ, Յակուտական ԻԽՍՀ և Կամչի ԻԽՍՀ բնակչության առանձին կատեգորիաները—համապատասխան յերկրային և մարզային գործադիր կոմիտեների և ինքնավար հանրապետությունների ժողովրդական կոմիտարների խորհուրդների վորոշումներով:

դ) Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսի կղզիների մշտական բնակչությունը:

է) Լենինգրադի մարզի Մուրմանսկի ոկրուգի ամբողջ աշխատավոր բնակչությունը:

զ) Դարստանի ԻԽՍՀ Աշխատակի, Կարանգայսկի և Կիզլարի շրջանների նոգայցիների, կարանգայցիների և քուրքմենների աշխատավոր այն տնտեսությունները, վորոնց հարկվող յեկամուռը մեկ տնտեսության համար չի գերազանցում 400 ոռուրուց:

հ) Տամիկական ԽՍՀ Գործո-Բադախշանսկի ինքնավար մարզի այն վայրերի բնակչությունը, վորտեղ Տամիկական ԽՍՀ ժողովրդական կոմիտարների խորհուրդը գյուղհարկով հարկերը կը գտնի վոչ-նախատակահարմար:

Տամիկական ԽՍՀ ժողովրդական կոմիտարների խորհրդին քույլատրվում է Գործո-Բադախշանսկի ինքնավար մարզի համար սահմանել լրացուցիչ արտօնություններ, վորոնց չեն նախատեսված ներկա «Կանոնադրությամբ»:

ԱՅԼ ԱՐՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՈՐԵՆՔԻ 87-ՐԴ ՀՈԴ. — Վերացված է:

ՈՐԵՆՔԻ 88-ՐԴ ՀՈԴ. — Վուկու և պլատինի արդյունաբե-

րության մեջ աշխատավոր վուկի վնասողների տնտեսություններն ազատվում են հարկից:

Հրահանգի § 50. — Վուկի վորոնողներն աղատվում են գյուղ-հարկի վճարումների ոչյն մասից միայն, վորի վճարման ժամկետները վորոնելու աշխատանքին անցնելու պահին դեռ չեն լրացել:

ՈՐԵՆՔԻ 89-ՐԴ ՀՈԴ. — Վերացված է:

ՈՐԵՆՔԻ 90-ՐԴ ՀՈԴ. — Տարերային աղետից տուժած տընտեսությունները հարկից ամբողջովին կամ մասնակի ազատվում են շրջանային գործադիր կոմիտեների կողմից, յելենով տնտեսության կրած վնասների չափերից և տնտեսության կարողությունից:

Հրահանգի § 51. — Տարերային աղետի և այլ պատճառների համար հարկից զեղչ տալու մասին շրջանային գործադիր կոմիտեների վորոշումը հիմք չի ծառայում պետական մյուս պարագայություններից արտոնություններ տալու համար:

Տարերային աղետի արտոնություններ տալու և զեղչերի չափը վորոշչությունների համար հիմք կարող են ծառայել շրջանային ապահովագրական հանձնաժողովների արշանագրությունները:

ՈՐԵՆՔԻ 91-ՐԴ ՀՈԴ. — Հարկից ամբողջովին ազատվում են գյուղական ակտիվատունների այն ընտանիքները, վորոնք տուժել են կուլակային վրեժխնդրությունից, գյուղի սոցիալիստական վերակառուցման պայքարում և հանրային սեփականություններ պահպանելու համար:

ՈՐԵՆՔԻ 92-ՐԴ ՀՈԴ. — Հարկից ամբողջովին ազատվում են անտառային այն աշխատակիցների ընտանիքները, վորոնք սպանվել են պետական գույքի պահպանման համար իրենց ծառայության պարտականությունները կատարելու ժամանակ կամ իրենց պաշտոնիյական պարտականությունը կատարելու կապակցությամբ:

ՈՐԵՆՔԻ 93-ՐԴ ՀՈԴ. — Վերացված է:

Ե. ՄԵՆԱՏՆԵԸ ԱՇԽԱՎԱԿՈՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԿԻ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

ՈՐԵՆՔԻ 94-ՐԴ ՀՈԴ. — Մենատնես աշխատավոր տնտեսությունները հարկը վճարում են նույն այն ժամկետներում, ինչպիսին սահմանված են կոլտնտեսականների համար (հոդ. հոդ. 45 և 46):

ՈՐԵԿԲԻ 95-ՐԴ ՀՈԴ.— Սահմանել, վոր վոչ-աշխատավորական յեկամուտներ (յեկամուտներ գնում-վաճառումից, բանվորական ուժ վարձելուց) ունեցող մենատնտես գյուղացիական տնտեսությունները, նույն բնում նաև կուլակային տնտեսությունները, գյուղարկի յեն յեկարկվում աշխատավոր մենատնտեսների համար սահմանված դրույժներով, սակայն վոչ թե յեկամտաքերության նորմաներով, այլ իրական յեկամուտներով։ Այդ տնտեսությունների ցուցակները և յուրաքանչյուր տնտեսության յեկամուտների շաբաթ հաստատում և շրջանային գործադիրի կոմիտեյի նախագահությունը։

Հրահանգի § 52.— Շրջանային ֆինանսական բաժինները պարտավոր են ձեռք առնել բոլոր միջոցները, վորպեսզի ապահովեն վոչ-աշխատավորական յեկամուտներ ունեցող տնտեսությունների, նույն թվում նաև կուլակային տնտեսությունների լրիվ հայտնաբերումը, նրանցից հաշվարկված գյուղարկելի լիով վիճականները։

Այն տնտեսությունները, վորոնք յենթարկված են գյուղհարկի որենքի 95-րդ հոդվածի կարգով, հարկային վոչ մի արտոնությունից, այդ թվում և ընտանիքի անաշխատունակ անդամների համար արվող գեղչից չեն ոգտվում։

ՈՐԵՆՔԻ 96—103-ՐԴ ՀՈԴ. ՀՈԴ.— Վերացված են։

Հատված 4-րդ

ՀԱՐԿ ԳԱՆՉՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐ, ԴԻՄՈՒՄՆԵՐ ՅԵՎ ԲՈՂՈՔՆԵՐ ՏԱԼԻ ՅԵՎ ԲՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

ՈՐԵՆՔԻ 104-ՐԴ ՀՈԴ.— Հարկը նիշտ և ժամանակին անցկացնելու պատասխանատվությունը դրվում է շրջանային ֆինանսական բաժինների վրա։

ՈՐԵՆՔԻ 105-ՐԴ ՀՈԴ.— Վերացված է։

ՈՐԵՆՔԻ 106-ՐԴ ՀՈԴ.— Բոլոր հիմնարկությունները, ձեռնարկությունները և կազմակերպությունները պարտավոր են հաղորդել ֆինանսական մարմիններին բայց նրանց պահանջման հարկատուններին վճարված գումարների մասին տեղեկությունները։

ՈՐԵՆՔԻ 107—109 ՀՈԴ. ՀՈԴ.— Վերացված են։

ՈՐԵՆՔԻ 110-ՐԴ ՀՈԴ.— Դիմումներ և բողոքներ տալը չի

կասեցնում հարկի գանձումը։ Այն դեպքերում, յերբ վորոշում և հանված հոգուտ հարկատվի, սխալ գանձված գումարները և ուղարացված գույքը պետք է վերադարձին 10 որվա ժամկետում։ Այն դեպքում, յերբ հնարավոր չի վերադարձնել գույքը վերջինի վաճառման հետևանքով, պետք է հասուցվի գույքի լիովին արծեքը։

Հրահանգի § 53.— Գյուղհարկը սխալ հաշվարկելու մասին բողոքները արգելում են շրջանային ֆինանսական բաժնին վճարման ծանուցադիրը հանձնելու որից վոչ ուշ քան մեկ ամսվաժամկետում։ Մի ամսվաժամկետն անցնելուց հետո, հաշված ծանուցադիրը հանձնելու որից, շրջանային ֆինանսական բաժնի կողմից բողոքները չեն քննվում։

Հրահանգի § 54.— Շրջանային ֆինանսական բաժնի վարիչը պարտավոր է վոչ ուշ քան բողոքը ստացած որից 20 օրիւ ընթացքում (կարմիր-բանակայինների բողոքների համար վոչ ուշ քան 7 օրում բողոքն ստանալու որից) քննել այն, հանել իր վորոշումը և այդ մասին գրալոր ձեռով հայտնել բողոքատվին։

Գյուղհարկը սխալ հաշվարկելու համար հարկատվի տված բողոքները անպայման անձամբ քննում է շրջանային ֆինանսական բաժնի վարիչը, վորոնի հետև բողոքները քննելու և քաղաքացիների որինական պահանջները բավարարելու համարվում և նրան անմիջական պարտականությունը և լավագույն մեթոդներից մեկն է հանդիսանում հարկային տեսուչների աշխատանքը ստուգելու և խորհրդային որենքները նրանց կողմից պահպանվելու բնակագույնում։

Բողոքները քննելու ժամանակ կանչվում է բողոք տվող հարկատուն։ Յևթե նա չի ներկայանա, բողոքը կարող է քննվել նրա բացակայությամբ։

Հրահանգի § 55.— Շրջանային ֆինանսական բաժնի վարիչը վորոշումը կարող է բողոքարկել վոչ ուշ քան մի ամսվաժամկետում վորոշումը հարկատվին հայտարարելու որից հետո դաշկական հարկից հանրակետության ֆինանսների ժողովրդական կոմիտեներին, վորը չունի մարզային բաժնություն, ինքնային հանրապետության ֆինանսների ժողովրդական կոմիտեին, մարզական կամ յերկրային ֆինանսական բաժնին։ Շրջանային ֆինանսական բաժնի վարիչի վորոշումը բողոքատվին հանձնելու որից մի ամսվաժամկետն անցնելուց հետո բողոքը վերադաս

Փինանսական մարմինների կողմից չի քննվում։ Դաշնակից կամ էնքնալար հանրապետության ֆինանսների ժողովրդական կոմիտեակարգ, մարզային կամ յերկրային ֆինանսական բաժինը պարտավոր և քննել ստացած բողոքը վոչ ուշ քան մի ամսվա ժամկետում բողոքը ստանալու որվանից (իսկ կարմիր-բանակայինների բողոքները վոչ ուշ քան 15 որում բողոքը ստանալու որվանից) և իր վորոշման մասին հաղորդել գրավոր ձևով բողոքատվին և համապատասխան ըլջանային ֆինանսական բաժնի։

Հրահանգի § 56. — Գյուղհարկով հարկման մասին հարկառումների աված դիմումներն ազտավում են պետական միասնական սուրբի վճարումից։

Հրահանգի § 57. — Բողոքներ տալը չի կասեցնում հափկեգանձումը։ Հարկը լրիվ կամ մասնակի վճարելը չի կարող պատճառ ծառայել հարկառումի դիմումը կամ բողոքը չքննելու։

Հատված 5-րդ

ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԻ ՊԱՏԱԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՈՐԵՆՔԻ 111-ՐԴ ՀՈԴ. — Յեկամուտների աղբյորները քագցնելու համար հարկառումները յենքարկվում են դատական պատախանատվության։

ՈՐԵՆՔԻ 112-ՐԴ ՀՈԴ. — Վերացված ե։

Հրահանգի § 58. — Հարկառուների յուցակը կազմելիս բաց թողած տհուեսությունների հարկումը, ինչպես նաև հաշվառված յեկամատի աղբյուրների և հարկի հաշվարկված դումարի փոփոխումը թույլատրվում ե կատարել միայն ընթացիկ դրույքային տարվա սահմաններում։

Այդ ուղղումները հարկառուների յուցակներում պետք է ստուգի հարկային ավագ տեսուչը և հաստատի ըլջանային ֆինանսական բաժնի վարիչը։

ՅԵԹԵ նոր հայտարերված յեկամատի աղբյուրների լրացուցիչ հարկումը կատարվում ե հարկի վճարման ժամկետներն անցնելուց հետո, այդ դեպքում լրացուցիչ հաշվարկված հարկի դումարը պետք ե վճարվի 15-որյա ժամկետում վճարման ծանուցարերը հանձնելու որից։

ՈՐԵՆՔԻ 113-ՐԴ ՀՈԴ. — Հարկը սահմանված ժամկետներում

չվճարելու դեպքում ապառքապարտների նկատմամբ ձեռք են առնվում որենքով նախատեսված բոլոր միջոցները։

Վճարը ժամկետին շմուծելու համար տույժ է գանձվում հետևյալ չափով։ Կուտնօնեսականներից և մենատնտես աշխատավոր տնտեսություններից՝ 0,1 տոկոս «կանոնադրության» 95-րդ հոդվածի կարգով, զյուղատնեսական հարկով հարկված տնտեսություններից՝ 1 տոկոս յուրաքանչյուր անցած որվա համար։

Ապառքապարտների գույքի վերգրումը և ուղարցումը կատարվում է նշորեն համապատասխանեցված ԽՍՀՄ կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական կոմիսարների խորհրդի 1937 թ. ապրիլի 11-ի վորոշմանը (ԽՍՀՄ Ռենֆ. Ժողով. 1937 թ. № 30, հոդ. 120) և այն ել միայն շրջանային ֆինանսական բաժնի յենքաշրջանային հարկային տեսչի կողմից։

ՈՐԵՆՔԻ 114-ՐԴ ՀՈԴ. — ԵԽՖՍՀ, ՌԽ և ԲԽՍՀ տերիտորիայում մուտք յեղած գյուղատնտեսական հարկի 25 տոկոսն անցկացվում է Միութենական բյուջեյին և 75 տոկոսը՝ հանրապետական և տեղական բյուջեներին։ Գյուղատնտեսական հարկի բոլոր մուտքերը մնացած դաշնակից հանրապետությունների տերիտորիայում անցկացվում են հանրապետական և տեղական բյուջեներին։

Գյուղատնտեսական հարկի մուտքերի բաշխումը դաշնակից հանրապետությունների պետական բյուջեների և տեղական բյուջեների միջև բողնվում է դաշնակից հանրապետությունների կառավարություններին այն հաշվով, վարչեսպի տվյալ գյուղարկությունների տերիտորիայում հարկի բոլոր մուտքերի վոչ պականա քան 10 տոկոսն անցկացվի պեմիջականորեն գյուղական բյուջեն։

Հատված 6-րդ

ԱՅՍ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱԾԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՅԵՎ ՀՐԱՑԱՆԳՆԵՐԸ

ՈՐԵՆՔԻ 115-ՐԴ ՀՈԴ. — Այս «կանոնադրությամբ» նախատեսված դաշնակից և ինքնապար հանրապետությունների ժողովրդական կոմիտեների խորհրդադիրների և տեղական գործադիր կոմիտեների վորոշումները պետք ե հրատարակեն վոչ ուշ համապատասխան տարվա հունիսի 15-ից։

ՈՐԵՆՔԻ 116-ՐԴ ՀՈՒ — Այս «կանոնադրության» կիրառման հրահանգի հրատարակությունը դրվում է ԽՍՀ Միության Ֆինանսների ժողովրդական կոմիսարիատի վրա:

Հատված 7-րդ

ՀԱՐԿԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

Հրահանգի § 59. — Դյուլհարկի վճարումների ընդունումը կատարվում է այն կարգով, վոր սահմանված է ԽՍՀ Միության ֆինժողովրդատի «Շրջանային Փինանսական բաժնների հարկային տեսչության աշխատանքի մասին գյուղական վայրերում» հրահանգով, վորը հաստատված է ԽՍՀՄ ԺԿԽ- կողմից 1937 թ. ապրիլի 29-ին:

Հրահանգի § 60. — ԽՍՀՄ Փինանսների ժողովրդական կոմիսարիատի կողմից հաստատված ձևի վճարման ծանուցադրերը յենթաշրջանային հարկային տեսչի կողմից դուրս են դրվում շրջանային ֆինանսական բաժնի վարիչի կողմից հաստատված՝ հարկատուների ցուցակների հիման վրա, ստորագրվում ևն հարկային ավագ տեսչի և յենթաշրջանային հարկային տեսչի կողմից ու վավերացվում են շրջանային Փինանսական բաժնի կողմով:

Յենթաշրջանային հարկային տեսչուչը վճարման ծանուցադրերը հանձնում ե ստացականով յուրաքանչյուր հարկատունի անմիջորեն կամ ուղարկում ե փոստով պատուիրված նամակով:

Ծանուցադրերը հարկատուներին հանձնելու պատասխանատվությունը կրում է յենթաշրջանային հարկային տեսչուչը: Վճարման ծանուցադրերը պետք է հարկատուներին հանձնվեն վոչ ուշ հարկի առաջին ժամկետի վճարումը համեմուց 15 որ առաջ: Արգելվում է պահանջ դնել վճարողների առողջ հարկի վճարման մասին և տույժ հաշվարկել մինչև հարկի վճարման համար սահմանված ժամկետի լրանալը, ինչպես և վճարման ծանուցադրերը հանձնելու որից 15-որյա ժամկետը լրանալուց առաջ:

Դյուլհարկը հարկատուներից ընդունվում է վճարման ծանուցադրերով, բացառությամբ այն դեպքերի, յերբ հարկը փոխադրվում է փոստային հիմնարկների միջոցով:

Դաշնակից և բնքնավար հանրագույնությունների Փինժողովրդական կառավագին (մարզային) Փինանսական բաժնները, ինչպես նաև շրջանային ֆինանսական բաժնները լիակատար պատասխանատվություն են կրում գյուղհարկի բոլոր աշխատանքները ճիշտ և ժամանակին կատարելու և անպայման որենքով սահմանված ժամկետներում յուրաքանչյուր կոլտնտեսականից և մենատնտեսից ստացվելիք գյուղհարկի վճարումների համար:

Ֆինանսական մարմինները պարտավոր են ապահովել այն բոլոր տնտեսությունների լիակատար ընդդրկումը, վորոնք յենթակա յեն հարկաման գյուղհարկով, հարկի ճիշտ հաշվարկման և որենքի ու այս հրահանգի համաձայն բոլոր արտօնությունների կիրառման:

Այն բոլոր անձինք, վորոնք մեղավոր կճանաչվեն որենքի խախտումների և աղավաղումների մեջ, պետք է անհապաղ պատասխանատվության կանչվեն:

ԽՍՀ Միության ֆինանսների ժողովրդական կոմիսար՝
Վ. ԶՈՒԲԵԱՐ

Հարկերի և տուրքերի վարչության պետ՝ Դ. ՇԱՏԱԼԻՎ,

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԵՐԻ և ՏՈՒՐՔԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

№ 288/147

26 *Majlis*, 1938 A.

Մոսկվա, Կույբիշև փ. № 9

ՄԵՐՈՅԵՆԱԿԱՆ ՅԵՎ ԻՆՔՆԱՎՈՐ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆՃԱՆԿՈՄԱՏՆԵՐ Ն, ՄԱՐԶԱՅԻՆ ՅԵՐԿԱ ԱՅԻՆ, ՈԿՐՈՒԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔՅԱՅԻՆ ՅԵՎ ՇԵՐՋԱՅԱՅԻՆ ՖԻՆՃԱՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՎԱՐԴՈՒԵՐԻՆ.

1938թ. ԳՅՈՒՂԱՏԵՍՎԱԿԱՆ ՀԱՐԿԻ ԱՆՑԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ԽՍՀ Միութենական Ֆինժողկոմատը առաջարկում է՝
1938 թ. կոլտնտեսականների և մենատնտես գյուղացիական
տնտեսությունների գյուղատնտեսական հարկի կիրառման ժամա-
նակ զեկավարվել 1934 թվի գյուղատնտեսական հարկի որենքով և
այն փոփոխություններով, վորոնք մտցված են ԽՍՀՄ կենտղործ-
կումի և ժողկոմի նորհի 1935 թ. մայիսի 31-ի «1935 թ. գյու-
ղատնտեսական հարկի մասին»:

ԽՍՀՄ Կենտղործկոմի և Ժողկոմի խորհի 1936 թ. հուլիսի
20-ի № 68/1313 «Պյուղատնտեսական հարկի որենքի գործողու-
թյունը յերկարացման մասին» և ԽՍՀՄ Կենտղործկոմի և Ժող-
կոմի խորհի 1937 թ. ողոստոսի 7-ի № 104/1318 «Պյուղատնտեսա-
կան հարկի որենքը վոտիվելու մասին» վորոշումներով և
նույնապես ԽՍՀՄ Ֆինժողկոմատի 1937 թ. սևամբերի 25-ի
№ 479 Հրահանգով (ԽՍՀՄ ՖՃԴ 1937 թվի սեպտեմբերի 25-ի
№ 487 Հրամանոր):

1938 թ. գյուղհարկը սետք և անցկացվի քաղաքական բարձր մակարդակի վրա և համապատասխանողեն լրիվ ու ճիշտ կիրառել գյուղհարկի որենքը:

Տեղական խորհուրդների և շրջդորձկոմիտը կողմից կոլտընտեսականների հարկման դրույքները և մենատնտես դյուքացիական տնտեսությունների յեկամտարերության նորմաները 1938 թ.

կարող են գովիս լուսաթյան յենթարկվել բացառիկ դեպքերում, միայն նոր կազմակերպված մարդկությամբ:

Բոլոր այն գեղաքերում յերբ 1937 թ. խախտված են յեղել գյուղհարկի որենքների 30, 31, 45, 52, 53, 54, 55, 56, 57, 58, 59 և 61-րդ հոդվածները և հայոնաբերված են վնասարարական գործողություններ, կոլտնտեսականների հարկման դրույքների և մենատնտես գյուղացիական տնտեսությունների յեկամտարերության նորմաների ու շուկայական յեկամուտների գծով և նույնպես դյուղհարկի վճարման ժամկետների որինական սահմանում, Փինանսական մարզինները պարտավոր են ընթացիկ տարում մացնել հանրապետական մարզային (յերկրային) գործադրութիր կոմիտեներում նախագիծ 1937 թ. գյուղհարկի վորոշման անհրաժեշտ փոփոխությունների մասին:

Ֆինանսական մարմինները հատուկ ուշգրություն պետք են պարզեցնեն մենատնտես տնտեսությունների հարկման խնդիրներին։ 1987 թ. առանձին հանրապետություններում, մարդկում և յերկրներում մենատնտես տնտեսությունները յեղել են թերա-հարկված, հատկապես այնպիսի մենատնտես տնտեսություններ։ Վորոնյան ունեցել են ճիեր և այլ բանով անասուններ։

Մենատնտես տնտեսությունների գյուղհարկով հարկումը
պէտք է լրիվ համապատասխանի ԽՍՀ Միության ձեկի-ի և Համ-
կարգ (բ) կ կ 1938 թ. ապրիլի 19-ի վորոշման «անհատական-
տնտեսությունների վերաբերմամբ հարկերի և այլ սպառտավորու-
թյունների մասին» :

Որենքով սահմանված արտօնությունները պետք է լրիդ կիրառել այն տնտեսությունների նկատմամբ, վորոնք իրավունք ունեն ստանալու արտօնություններ՝

Յիշմարմինները պարտավոր են հատուկ ուշադրություն գարձնել զառամյալ կոլտնտեսական և մենատոնտես տնտեսություններին տրվող արտօնությունների կիրառման վրա, տեղիք չտալով այն սխալների և անփուլթ վերաբերմունքին, վորոնք տեղի յեն ունեցել անցյալ տարում գյուղարկի անցկացման ժամանակ :

ԳյուղՀարկի հաշվառման ամբողջ աշխատանքները և վճարման
ծանուցադրերի հանձնումը պետք է վերջացվի ԽՍՀՄ Ֆինմող-
կոմառի 1938 թ. մայիսի 8-ի № 250/92 հրամանով առևմանված
ժամկետներում:

Միաժամանակ ԽՍՀՄ Ֆինդողկոմատը առաջարկում է յեղնեալով տեղական ֆինանսական մարմինների կատարած հարցումնեարեց ընդունել ի դեկավարություն հետեւյալ պրակտիկ ցուցմունքները:

1. Կոլտնտեսական տնտեսությունները, վորոնք ունեն տնամերձ հողամասեր, բայց փաստուն նրանք չեն ոգտագործում ցանքսի և տնկարանների տակ, կարող են ազատվել գյուղհարկից շրջանային դործադիր կոմիտեների վորոշմամբ գյուղհարկի որենքի 29-րդ հոդվածի կարգով:

Այն կոլտնտեսականներին, վորոնց տնամերձ հողամասեր չլինելու պատճառով, կոլտնտեսությունը ժամանակալորապես հատկացրել է հողամաս ոգտագործելու և այդ հողամասերը կոլտընտեսականների կողմից ոգտագործված են այդպիսի կոլտնտեսականներին պետք է համարել վորպես չհանրայնացված յեկամուտի աղբյուրներ ունեցողների:

2. Տրակտորիստ-կոլտնտեսականների տնտեսությունները գյուղհարկի յենթարկվում են գյուղհարկի որենքի 30-րդ հոդվածի կարգով: Տրակտորիստ-կոլտնտեսական տնտեսությունների կողմից ԽՏ կայաններից դրամով և բնամթերքով ստացված վաստակները չեն հաշվում վորպես վարձուաշխատավարձ և յենթակա չեն յեկամտային հարկի և կուլտուրքի հարկման:

3. Կոլտնտեսական տնտեսությունները, վորոնք ունեն մշտական յեկամուտներ ուրիշների կաթը իրենց սեպարատորով մշտակելուց, այդպիսի տնտեսությունների գյուղհարկի դրույժները գյուղհարկ որենքի 31-րդ հոդվածի կարգով բարձրացվում են 40—80 տոկոսով:

Մենատնտես տնտեսությունների կողմից սեպարատորի ոգտագործումից ստացվող յեկամուտները, յենթարկվում են գյուղհարկի հարկման, վորպես վոչ գյուղատնտեսական յեկամուտներ:

4. Արհեստագործական և տրանսպորտային կոոպերատիվ արտելների տնտեսությունները վորոնք վարում են գյուղական տնտեսություններ, բայց չեն համապատասխանում ԽՍՀՄ-ի մկ-ի № 479 հրահանդի 8 Ե-րդ «ա» և «բ» կետերի պայմաններին, յենթարկվում են գյուղհարկի ընդհանուր հիմունքներով, մենատնտես տնտեսությունների համար սահմանված կարգով:

5. Տրանսպորտային արտելների անդամները, վորոնք ունեն յեկամուտներ չհանրայնացված ձիու ոգտագործումից

և դրա հետ միատեղ զրազվում են դյուզատնակեսությամբ, այդ գյուղատնտեսությունից ստացված յեկամուտը յենթարկվում է գյուղհարկի մենատնտես տնտեսությունների համար սահմանված ընդհանուր կարգով, իսկ արտելում կամ արտելից դուրս տրանտագործի արտելների անդամների կողմից ձիու ոգտագործումից ստացված յեկամուտները յենթարկվում են հարկման յեկամտային հարկով:

6. Այն դեպքերում յերբ մենատնտես տնտեսությունը դիմում է տվել կոլտնտեսություն մտնելու համար մինչև գյուղհարկի վճարման առաջին ժամկետը լրանալը, բայց ընդունումը ձեվակերպվել է գյուղհարկի մուծման ատաշին ժամկետը լրանալուց հետո, այդպիսի դեմքերում դիմումի ուշ քննելու հանդամանքը չի կարող հիմք ծառայել զրկելու անտեսությանը գյուղհարկի որենքի 31-րդ հոդվածով սահմանված արտօնությունից:

Յուրաքանչյուր նման դեպքում անհրաժեշտ է մանրագննին առողջել յերբ և տրված դիմումը և ինչու յե ձգձգվել տնտեսությունը կոլտնտեսության մեջ ընդունումը ձևակերպելու խնդիրը:

7. Գյուղական վայրերում բնակվող տնայնագործները և արհեստավորները, վորոնք չունեն հողամասեր գյուղատնտեսության ոգտագործման համար (ցանքս, խոտհարք և այլն) և բանող անասուններ, բայց ունեն մեկ կող կամ վոչ ավելի 2 զլուխ մանր անասուններ, այդպիսիները յենթակա չեն գյուղհարկի այլ յենթարկվում են յեկամտային հարկի:

8. Մենատնտես տնտեսությունների կողմից, թեկուզ առանց իրենց սեփական ինվենտարով և ձեվով հանրայնացված սեկտորի հիմնարկություններում ձեռնարկություններում նույնպես խորհութեանություններում կատարված ամեն տեսակի պատահական ժամանակալոր աշխատանքներից ստացված վաստակները հաշվվում են վորպես վոչ գյուղատնտեսական յեկամուտներ յեկ մըտցնում են գյուղհարկի յենթակա հարկվաղ յեկամուտների մեջ:

9. Մենատնտես տնտեսությունների կողմից ուտիլի հավաքից և նույնպես իրենց ձիերով փայտ կամ շինարարական նյութեր փոխադրելուց ստացված յեկամուտները հաշվվում են վորպես վոչ գյուղատնտեսական յեկամուտներ և յենթակա յեն գյուղհարկի ընդհանուր հիմունքներով:

10. Փոխադրությունից ստացված յեկամուտը, յեթե բացա-

կայում ե գյուղատնտեսական աղբյուրների յեկամուտը (ցանք,
կովեր, խոհարքներ, մանր անսառուներ և այլն) հարկվում է
վոչ թե գյուղհարկով, այլ յեկամատային հարկով, այդ հարկի
համար սահմանված որենքով:

11. Գյուղհարկի վճարումից ազատվում են նաև այնպիսի
դառամյալ կոլտնտեսականների, մենատնտեսների տնտեսություն-
ները, վորոնց հետ միատեղ ապրող ընտանիքների աշխատունակ
աւդամները աշխատում են վարձով կամ սովորում են ուսումնա-
կան հաստատություններում— վորտեղ ուսուցման տեղու-
թյունը մեկ տարուց ավելի յե:

1938 թ. զառամյալ կոլտնտեսական և մենատնտես տնտե-
սություններին գյուղհարկի արտօնություններ տալու ժամանակ
անսպասունակներ են համարվում ըստ տարիքի տղամարդիկ,
վորոնք ծնված են 1878 թվում և կանայք 1883 թվի և առաջ
և յերեխանները 1922 թվին և հետո:

Զառամյալ տարիք ունեցող մենատնտես տնտեսություն-
ները, վորոնք ունեն ձիւր— գյուղհարկի որենքի 68-րդ հոդվա-
ծով սահմանված արտօնությամբ չեն ողտվում:

12. Գյուղհարկի վճարումից լիովին ազատվում են այն կոլ-
տնտեսական անտեսությունները, վորոնց կազմի մեջ մտնում
են, կոլտնտեսության աշխատանքում տուժերու հետևանքով
հաշմանդամության 1-ին և 2-րդ խմբակներին դասված հաշ-
մանդամները:

13. Գյուղհարկի յենթակա չեն այն կոլտնտեսական անտե-
սությունները, վորոնք կոլտնտեսությունների վարչությունների
հետ կնքած պայմանագրերի հիմն վրա աշխատում են ստորեր-
կրյա ածխային արդյունաբերության մեջ յեկ տորֆի մշակու-
թյուններում:

Կոլտնտեսականների կողմից ստորերկրյա ածխարդյունա-
բերության, տորֆամշակումների աշխատանքներից յեկ անտա-
ռամշակման (ինյուամշակում, փայտի դուրս տանելը, փայտը
գետով փոխադրելը և այլն) աշխատանքներում ստացած յեկա-
մուտները յենթակա յեն յեկամատային հարկի և բնակարանա-
յին կուլտիենցարային շինարարության կարիքների համար գանձ-
վող տուրքով. ըստ աշխատանքի վայրի— բանվորների և
ծառայողների համար սահմանված գրույքներով:

14. Գյուղհարկի հրահանդի § 15 և § 47-րդ նշված ար-

տոնությունները տրվում են այն տնտեսություններին, վորոնց
հիմնական աշխատառղ գտնվում է ծառայության մեջ կաթմիր բա-
նակում կամ Կարմիր նավատորմում, թեկուղ մինչեւ Կարմիր
բանակ կանչվելը տնտեսության հիմնական աշխատառղ վարձու
աշխատանքով չի դարձվել, ընդուրում գյուղհարկի 33-րդ հոդ-
վածում՝ մնացած պայմանների պահպանումը պարտադիր է:

15. Ընտանիքի անդամների մահացության հետեւվանքով թո-
շակ ստացող ընտանիքները, ազատվում են գյուղհարկի վճարու-
մէց, յիթի նրանք համապատասխանում են գյուղհարկի որենքի
33-րդ և 69-րդ հոդվածներում մնացած պայմաններին:

16. Բանվորների, ծառայողների և արհետսադործական ար-
տելիների անդամների տնտեսությունները, վորոնք հարկված են
գյուղհարկով, կոլտնտեսականների դրույքներով, անաշխատու-
նակների և այլ արտօնությունները տրվում են կոլտնտեսական-
ների համար սահմանված ընդհանուր հիմունքներով:

17. Գյուղհարկի որենքի 65-րդ հոդվածով նախատեսված
ե վոր «բոլոր դեպքերում մենատնտեսների հարկի դրույքը պետք
է վոչ պակաս քան 25%-ով ավելի լինի տվյալ վայրում կոլտնտե-
սականների համար սահմանված դրույքներից»:

Գյուղհարկի, որենքով նախատեսված արտօնությունները
ուեաք և արմի մենատնտես տնտեսություններին հարկի հաշ-
մանդամների կումարից կարգով ինչպես որինակ՝

Մենատնտես տնտեսությունից հաշմարկված գյուղհարկի մին-
չե արտօնություն տալը 32 ոռութի: Տվյալ գյուղում կոլտնտեսա-
կանների գյուղհարկի ամենաբարձր դրույքն և սահմանված 40
ոռութի: Գյուղհարկի որենքի 65-րդ հոդ. համաձայն այդ մե-
նատնտես տնտեսության հարկի գումարը պետք է հասցի մին-
չել 30 ոռութի (25% բարձր տվյալ վայրում կոլտնտեսականների
համար սահմանված գրույքներից):

Տնտեսությունը համաձայն գյուղհարկի որենքի 66-րդ հոդ.
իրավունք ունի ստանալու զեղչ աշխատավորության համար
10% հարկի դրույքից և պատերազմի հաշմանդամության համար
20 ոռութի (որենքի 82-րդ հոդ.): Այդպիսով տվյալ տնտեսու-
թյունից մնում է վճարման յենթակա գյուղհարկ 25 ոռութի
(50 ոռութի-5ո. և 20 ո.):

18. Գյուղհարկի հրահանդի 48-րդ պարագափում նախատես-
ված արտօնությունը տրվում է անտառային պահպանության այն

աշխատողներին, վորոնց անտառում՝ գտնվող չնչապատկան հողամասը չի գերազանցում ԽՍՀՄ-ի ժկի 1937 թ. հունիսի 1-ի վրոշմամբ թույլատրված չափերից (ԽՍՀՄ Որ. մոդ. 1937 թ. 16 հուլիսի № 41):

Այն գեղքերում, յերբ անտառային պահպանության աշխատողները բացի անտառում՝ գտնվող գյուղատնտեսությունից ունեն նաև գյուղատնտեսական որյեկտներ գյուղում, նման գեղքերում այդպիսի անտեսությունները պետք են հարկվեն գյուղ-հարկով վորոտես մենասնտես, միացած յեկամուտներից (ոօ ըստ աշխատությունների յեկամուտները միացվում են):

19. Պահային կարգով վերաբնակվող տնտեսություններին գյուղհարեի արտոնություններ արգում են ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԿ 1937 թ. նոյեմբերի 17-ի № 115/2043 վորոշման և ԽՍՀՄ ՖԺԿ 1938 թ. հունվարի 5-ի № 9 հրամանի համաձայն:

Այս կարգադրությունը հրապարակվելու որից վերացվում են ԽՍՀՄ Ֆինանսնության կողմից գյուղհարեկի գծով առանձին խճաղերների շուրջը տրված պարզաբնույթները: Վերացվում են նաև ԽՍՀՄ ՖԺԿ № 479 հրահանգի 20-րդ պարագրաֆում նշված ժամկետները, վորը ստհանակած ելու միայն 1937 թ. համար:

Անմիջապես սկսեք հարկային տեսուչների հրահանգումը 1938 թ. գյուղհարեկի անցկացման կարգի մասին:

ԽՍՀ Միության ֆինանսների ժողովրդական կոմիսարի

տեղակալ՝ Դ. ՇԱՏԱՆՅԱՎ,

Հարկերի և Տուրքերի վարչության պետ՝ ԿՈՐԱԳՈՒԻՆ



Սրբագրէ և Մանուկյան

Գլավիստի լիազոր Ա-4007, պատվեր 542, տիրած 3000
ԳԵՂԱՐԱԾԻ ՏՊԱՐԱՆ, ՅԵՐԵՎԱՆ, ԼԵՆԻՆԻ 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0203489

